ցած Հայեր կան, որոնց անունները և մականունները յայտնապէս ապացուցանում են նոցա Հայկական ծագումից լինելը, մանաւանդ Նարցիները, որոնք այժմ էլ ծածուկ քրիստոնէութիւն են անում։ Ո՞վ այցելեց նրանց, ո՞վ հոգաց, մտածեց նորանց վերայ, ո՞ր քաջ հովիւը գնաց այդ կորուսեալ հօտերի ետևից։

Ինտելլիգենցիան զզվում է գիւղացուց. նրա կեանքի թշուառութիւններից, կեղտից, ոչիլներից. սիրում է քաղաքների տաք տեղերը, հաճոյական կեանք, քնքոյշ ճաշակ։

Անորդի Հայերը փախչում են աշխատութիւնից. Հէնց աշխատութիւնից փախչելու համար է, որ դրանք անորդի են մնացել։ Այդ մարդկային բարեմասնութիւններից զրկված արարածները սիրում են արծաթի յափշտակութիւն, գողութիւն. նրանք միայն մեռելաթաղներ են, պատրաստ պպզած մեռելահոտի գլխին։

Սուտ են բոլորը. առանց գործի խօսքերը կեղծաւոր։

Համազգային հոգւոյ միաւորութեան մտքից դուրս այն ամենը, որ պատուաւոր ազնիւ անուններով միայն բեռնաւորուած մատչում է նորա սուրբ սեղանին. նա վարձկան է, նա գող է, նա աւազակ է։